

© 2022. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

© 2022. Նկարագրողումը՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ:

Հարցերի համար դիմել Անուշ Հարությունյանին,
էլ. հասցե՝ research@peacedialogue.am:

Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում» նախագծի շրջանակներում:



Նախագիծն իրականացվում է «Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի» (EED) կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:



Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում» նախագծի շրջանակներում:



Նախագիծն իրականացվում է «Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի» (EED) կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հկ-ն: Այն չի արտացոլում «Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի» (EED) տեսակետները:

Վանաձոր, 2022թ.

ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն

Աշխատանքային խումբ

Ծրագրի աշխատակազմ՝
Էդգար Իսախանյան՝ Նախագծի ղեկավար,
Անուշ Հարությունյան՝ Նախագծի համակարգող

Փորձագետներ՝
Արմեն Գրիգորյան,
Անի Հարությունյան

Խմբագիր՝
Վահագն Անտոնյան

Վանաձոր, 2022թ.

ՀՀ Ձինված Ուժերում
մարդու իրավունքների
պաշտպանության
խնդիրների վերհանման
նպատակով
իրականացված
հարցազրույցների
վերլուծություն

Աշխատանքային խումբ

Ծրագրի աշխատակազմ՝

Էդգար Խաչատրյան՝ Նախագծի ղեկավար,
Անուշ Հարությունյան՝ Նախագծի համակարգող

Փորձագետներ՝

Արմեն Գրիգորյան,
Անի Հարությունյան

Մշտադիտարկող խումբ՝

Անի Սարգսյան
Անի Տեր-Մելիքսեթյան
Ջարինե Դարբինյան
Էդուարդ Դանիելյան
Լենա Բարսեղյան
Մարգարիտա Դիլբարյան
Մարիա Գալստյան
Սվետլանա Գրիգորյան

Խմբագիր՝

Վահագն Անտոնյան

© 2022. Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից:

© 2022. Նկարագրողումը՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ:

Հարցերի համար դիմել Անուշ Հարությունյանին,
էլ. հասցե՝ research@peacedialogue.am:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002, ք. Վանաձոր;
Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ

Հեռ.՝	+374 (322) 21340;
Բջջ.՝	+374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝	ekhachatryan@peacedialogue.am ; mailbox@peacedialogue.am
Կայք՝	http://www.peacedialogue.am ; http://www.safesoldiers.am



PEACE DIALOGUE

Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում» նախագծի շրջանակներում:

EUROPEAN
ENDOWMENT FOR DEMOCRACY

Նախագիծն իրականացվում է «Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի» (EED) կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Խաղաղության երկխոսություն» հԿ-ն: Այն չի արտացոլում «Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի» (EED) տեսակետները:

Վանաձոր, 2022թ.

Բովանդակություն

- 05 Համառոտ
շարադրանք
- 07 Մեթոդաբանություն
- 08 Հարցման
մասնակիցներ
- 10 Ուսումնասիրության
արդյունքներ
- 52 Եզրակացություններ



Համառոտ շարադրանք

Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի, բանակում առկա խնդիրների, զինծառայության նկատմամբ քաղաքացիների (այդ թվում՝ զինապարտ) վերաբերմունքի վերաբերյալ կատարվել են մի շարք հետազոտություններ, հրապարակվել են զեկույցներ: Ցավոք, բանակում առկա առավել սուր խնդիրները դեռևս մնում են չլուծված, մարդու իրավունքների կոպիտ խախտումների դեպքերը բազմաթիվ են, ի թիվս այլնի՝ նաև այն պատճառով, որ չեն կատարվում դրանց պատճառների բացահայտմանն ուղղված խորքային հետազոտություններ եւ վերլուծություններ¹:

Սույն հետազոտությունը և զեկույցը, ի տարբերություն այլ ուսումնասիրությունների, հիմնված է բացառապես տվյալների առաջնային կրողների՝ զինծառայություն անցած քաղաքացիների հետ հարցազրույցների և դրանց արդյունքների վրա: Հետազոտական թիմին հաջողվել է հարցազրույցներ անցկացնել 112 նախկին ժամկետային զինծառայողների հետ, որոնց մեծամասնությունը զինվորական ծառայություն անցել են վերջին 5 տարվա ընթացքում, այսինքն՝ նրանց հայտնաձև տեղեկությունները թարմ են և արդիական²: Ավելին՝ հարցազրույցի մասնակիցների ճնշող մեծամասնությունը մասնակցել է նաև ռազմական գործողությունների:

Հետազոտությամբ խնդիր է դրվել բացահայտել զինծառայողների վերաբերմունքը զինվորական ծառայության, հրամանատարական կազմի, հավասարակիցների նկատմամբ, զինված ուժերում մարդու իրավունքների առավել տարածված խախտումների դրսևորումները, զինվորական ոլորտի իրավապահ մարմինների վերաբերյալ կարծիքները, դրանց հիմքում ընկած պատճառները, բանակում ներդրված առանձին ինստիտուտների արդյունավետությունը: Թվարկված երևույթների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, ամփոփումն ու վերլուծությունը նպատակ ունեն ստեղծելու տեղեկատվական հիմք զինված ուժերում առկա տարաբնույթ խնդիրների լուծման կամ, առնվազն, դրանց ուղղությամբ հետագա առավել թիրախային և խորքային հետազոտությունների իրականացման (ներառյալ՝ պաշտպանության ոլորտի պետական մարմինների կողմից) համար:

Հարցազրույցներն անցկացվել են յուրահատուկ մեթոդաբանությամբ, միմյանց հետ փոխկապակցված և միմյանց փոխլրացնող (ստուգող) հարցերի առաջադրմամբ: Առաջնային խնդիրը եղել է նախկին

1. Այս խնդիրն ունի թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ պատճառներ, սակայն դրանք չպետք է խոչընդոտ լինեն կարևորագույն այս ոլորտում առկա խնդիրների պատճառները վերհանելու և չեզոքացնելու համար:

2. Սա ամենևին չի նշանակում, թե ավելի վաղ ծառայություն անցած հարցվածների հայտնաձև տեղեկությունները նվազ կարևորություն ունեն:

զինծառայողներից առավելագույնս արժանահավատ տեղեկություններ ստանալը՝ փոխհաղորդակցության համար հնարավորինս բաց և անկաշկանդ հոգեբանական մթնոլորտ ձևավորելու շնորհիվ: Մի շարք դեպքերում հարցվողները հրաժարվել են պատասխանել առաջադրված հարցերին, և այդ հարցերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք նախկին զինծառայողների ընկալմամբ³ «վտանգավոր» հարցերն են (օրինակ՝ վատ վերաբերմունքի ականատես լինելու, այդ վերաբերմունքը դրսևորողների մասին և նմանատիպ այլ հարցեր): Ակնհայտ է, որ այդ հարցերին պատասխանելու դեպքում, ամենայն հավանականությամբ, մեծանալու էր բացասական ուղղվածությամբ տվյալների (հարցման արդյունքներ) մասնաբաժինը, այլ ոչ թե՝ հակառակը: Այդուհանդերձ, զեկույցի վերլուծությունները և եզրակացությունները հիմնվել են միայն ճշգրիտ պատասխանների վրա:

Զեկույցն ամփոփում են հարցազրույցների արդյունքների համադրված վերլուծության հիման վրա ձևակերպված հիմնական եզրակացությունները: Եզրակացությունների ցանկը սպառիչ չէ, քանի որ հավաքված տվյալները բնույթով բազմանշանակ են. դրանց այլընտրանքային ուսումնասիրությունը կարող է հանգեցնել բազմաթիվ այլ հետևությունների⁴: Որոշ դեպքերում առաջին հայացքից կարող է թվալ, թե որոշ եզրակացություններ «հանրահայտ փաստեր» են զինվորական ծառայության մասին, սակայն, նախ՝ այս դեպքում դրանց արժանահավատությունը կասկած չի հարուցում, երկրորդ՝ դրանք արտացոլում են օրինաչափություններ, այլ ոչ՝ եզակի դեպքեր, երրորդ՝ դրանք վերաբերում են հենց մերօրյա զինվորական ծառայությանը, ոչ թե անցյալի իրողություններին⁵:

3. Հաշվի առնելով տարիքային-հոգեբանական, աշխարհայացքային առանձնահատկությունները:

4. Այս առումով՝ հավաքագրված տվյալներն արժեքավոր կարող են լինել ոլորտով հետաքրքրված հետազոտողների, իրավասու պետական մարմինների համար:

5. Հաճախ ոլորտի պատասխանատուները հերքում են այժմ զինված ուժերում մարդու իրավունքների առավել լուրջ խախտումների դեպքերի առկայությունը՝ դրանք հնարավոր համարելով միայն հեռավոր անցյալում:

Մեթոդաբանություն

Հայաստանի Հարապետության զինված ուժերում (ՀՈՒ) մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակն ուսումնասիրելու նպատակով 2022 թվականի մայիս-հուլիս ամիսներին «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ ստեղծված մշտադիտարկող խմբի կողմից հարցումներ իրականացվեցին պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և զորացրված քաղաքացիների շրջանում:

Հարցազրույցներն իրականացվել են նախապես մշակված մեթոդաբանության հիման վրա կազմված հարցաշարի կիրառմամբ: Հարցազրույցների միջին տևողությունը եղել է մոտավորապես մեկ ժամ: Հարցվողներին հնարավորություն է տրվել չպատասխանել այն հարցերին, որոնց ինչ-ինչ պատճառներով չեն ցանկացել պատասխանել:

Հարցումներն իրականացվել են Հայաստանի Հանրապետության Լոռու, Տավուշի, Շիրակի, Սյունիքի, Կոտայքի, Արարատի մարզերում և Երևան քաղաքում, թվով 112 քաղաքացու մասնակցությամբ: Հարցմանը մասնակցել են 2014-2022 թվականն ընկած ժամանակահատվածում զինվորական ծառայություն անցած քաղաքացիները:


Հարցման մասնակիցներ

112 հարցվածների մեծամասնությունը (31 հոգի) ծառայել է 2019-2021 թվականներին, 25-ը՝ 2020-2022 թվականներին, 16-ը՝ 2017-2019 թվականներին: (Տես նկ.1):

Հարցվողների բաշխվածությունն՝ ըստ ծառայության տարեթվերի.


8 (7.1%) - ծառայել է 2014-2016 թվականներին,
5 (4.5%) - 2015-2017 թվականներին,
12 (10.7%) - 2016-2018 թվականներին,
16 (14.3%) - 2017-2019 թվականներին,
14 (12.5%) - 2018-2020 թվականներին,
31 (27.7%) - 2019-2021 թվականներին,
25 (22.3%) - 2020-2022 թվականներին,
1 (0.9%) - չի ցանկացել պատասխանել:

Նկ. 1 Հարցվողների քանակն՝ ըստ ծառայության տարեթվի



Հարցմանը մասնակցած քաղաքացիներից 69-ը (61.6%) տարբեր կարգավիճակներով մասնակցել է մարտական գործողությունների: Այդ թվում՝ երեք հարցված (4.3%) մասնակցել է միայն 2016 թվականի Ապրիլյան քառօրյային, 62-ը (89.9%)՝ միայն 2020 թվականի 44-օրյա պատերազմին, իսկ չորսը (5.8%) մասնակցել է երկուսին էլ: **(Տես նկ.2):**

Նկ. 2 Հարցվողների՝ մարտական գործողություններին մասնակցությունը




Ուսումնասիրության արդյունքներ

Ընդհանուր կարծիք ծառայության մասին

Նախապես մշակված հարցաշարի առաջին հարցը նպատակ է ունեցել պարզելու հարցվողների վերաբերմունքը զինվորական ծառայությանը: 112 քաղաքացուց 79-ը (70.5%) հայտարարել են, որ ծառայությունն իրենց ընկալմամբ տղամարդ դառնալու միջոց է, 29-ը (25.9%) զինծառայությունը ժամանակի անիմաստ կորուստ է համարել, 4 հարցվող (3.6%) չի ցանկացել պատասխանել այս հարցին: (Տես նկ.3):

Նկ. 3 Հարցվողների վերաբերմունքը զինվորական ծառայությանը



Զինվորական ծառայության դրական կողմերի վերաբերյալ հարցին ամենատարածված 3 պատասխաններից են եղել հետևյալ տարբերակները.


- կայանում ես որպես անհատականություն (68 հոգի, 60.7%),
- նոր շրջապատ ես ձեռք բերում (31 հոգի, 27.7%),
- պաշտպանում ես հայրենիքդ (9 հոգի, 8%):

Հարցվողներից

- 62-ը (55.4%) գտնում է, որ իր ծառայությունն անցել է շատ լավ կամ լավ,

- 31-ը (27.7%)՝ նորմալ,
 - 7-ը (6.3%)՝ շատ վատ կամ վատ:
- (Տես նկ.4)

Նկ. 4 Ինչպե՞ս է անցել Ձեր ծառայությունը



Միևնույն ժամանակ, հարցվողներից ընդամենը 22-ն (20%) է կրկին ծառայելու պատրաստակամություն հայտնել: 80-ը (71%) գտնում են, որ պատրաստ չեն ևս երկու տարի ծառայելու: Այս հարցին չեն պատասխանել հարցվողներից 10-ը (9%): (Տես նկ.5):

Հարկ է նշել, որ հարցվողների մի մասն, այնուամենայնիվ, նշել է, որ պատերազմի դեպքում պատրաստ կլինեն նորից ծառայելու, ոմանք էլ կծառայեին ավելի կարճ ժամկետով:


«Ի՞նչ խորհուրդ կտայիք ծառայության մեկնող Ձեր եղբորը կամ ընկերոջը» հարցին ամենատարածված պատասխաններից առաջատարներն են եղել

- «ուշադիր լինել» (36 հոգի, 32.1%),
- «կատարել հրամանները» (19 հոգի, 17%),
- «լինել այնպիսին, ինչպիսին կաս» (16 հոգի, 14.3%):

Հաճախ հնչող տարբերակներից են եղել նաև.

- «չխառնվել ուրիշների գործերին» (13 հոգի, 11.6%),
- «համեստ լինել» (12 հոգի, 10.7%):


Նկ. 5 Կուզենայիք և երկու տարի ծառայել



Զինձառայողների ընկալումները սպայական կազմի վերաբերյալ

Հարցմանը 112 մասնակիցներից 81-ը (72.3%) գտել է, որ ծառայության ընթացքում իրենց զորամասում եղել են, այսպես կոչված, «**չսիրված**» սպաներ: «**Չսիրված**» սպաներ (հրամանատարներ) հասկացությունը վերաբերել է այն սպաներին, որոնք կոպիտ են եղել զինվորների հետ՝ հայիոյել կամ հարվածել են նրանց: 26-ը (23.2%) նշել է, որ նման սպաներ չեն եղել, 5 մարդ (4.5%) հարցին չի պատասխանել: (**Տես նկ.6**):

Նկ. 6 Ձեր զորամասում «չսիրված» սպաներ կային



Նախորդ հարցին դրական պատասխան տված 81 հարցվողից 28-ը (34.6%) չի ցանկացել պատասխանել այն հարցին, թե որն է եղել սպաների նման վարքագծի պատճառը:

Տվյալ հարցին ամենահաճախ տրվող պատասխանները հետևյալն էին.

- որպեսզի զինվորները «գլխին չնստեն» (16 հոգի, 19.8%),
- ինքնահաստատման միջոց էր (11 հոգի, 13.6%),
- մարդ տեսակն էր այդպիսին (9 հոգի, 11.1%),
- պատերազմի դաժանությունները տեսնելը (6 հոգի, 7.4%):


Հարցվողները նշել են նաև, որ խուսափել են նման սպաների հետ առնչվելուց (29 հոգի, 35.8%) կամ ցուցաբերել են անհատական մոտեցում (23 հոգի, 28.4%): Հարցին չի պատասխանել 21 հոգի (25.9%):

Մարտական գործողություններին մասնակցած, «**չսիրված**» սպաների մասին հարցին դրական պատասխան տված 50 հարցվողից

- 18-ը (36%) գտել է, որ մարտական գործողությունների ընթացքում և հետո այդ սպաները դարձել են ավելի սիրված:
- 8-ը (16%) գտել է, որ նրանց վարքագիծը չի փոխվել պատերազմի ընթացքում կամ դրանից հետո:
- 17-ը (34%) այս հարցին չի պատասխանել:
- 1 հոգի (2%) գտել է, որ պատերազմական գործողությունների ընթացքում նման սպաների վարքագիծը դրականորեն փոխվել է, սակայն պատերազմից հետո նրանք վերադարձել են հին վարքագծին:
- 2-ը (4%) դժվարացել են պատասխանել հարցին, ևս
- 2 հոգի (4%) նշել է, որ չսիրված սպաների մի մասը պատերազմի ընթացքում կամ դրանից հետո իրենց կարծիքով փոխվել են դրականորեն, մյուս մասը՝ բացասականորեն:
- 2 հոգի (4%) պատասխանել է, որ այդ սպաները պատերազմի ընթացքում կամ դրանից հետո զինծառայողների կողմից դարձել են ավելի չսիրված:

(Տես նկ.7):

Նկ. 7 Պատերազմի ընթացքում և դրանից հետո փոխվել է արդյոք «չսիրված» սպաների վարքը




Հարցերի հաջորդ խումբը նպատակ է ունեցել պարզելու հարցվողների ընկալումները բացառապես կանոնադրային հարաբերություններով առաջնորդվող («**уставник**») սպաների վերաբերյալ:

Հարցվողների մեծամասնությունը (106 հոգի, 94.6%) գտել է, որ իրենց զորամասում եղել են բացառապես կանոնադրային հարաբերություններով առաջնորդվող սպաներ: Ընդամենը 6 հոգի է նշել (5.4%), որ նման սպաներ իրենց զորամասում չեն եղել: (**Տե՛ս նկ.8**):

Հարցին դրական պատասխան տված հարցվողներից

- 56-ը (52.8%) նշել է, որ նման սպաների հետ իրենք շփվում էին բացառապես կանոնադրության համաձայն,
- 19-ը (17.9%) փորձել է հարմարվել նման պայմաններում ծառայելուն,
- 4-ը (3.8%) չի կարողացել հարմարվել կանոնադրությամբ առաջնորդվող սպաների պահանջներին: Այս խմբից երկուսը հայտնել են, որ խուսափել են նման սպաների հետ շփումից կամ վեճի են բռնվել նրանց հետ:
- 27 մարդ (25.5%) չի պատասխանել, թե ինչպես են կարողացել «լեզու գտնել» նման սպաների հետ:

Նկ. 8 Ձեր զորամասում եղել են բացառապես կանոնադրային հարաբերություններով առաջնորդվող սպաներ




Զորամասում բացառապես կանոնադրային հարաբերություններով առաջնորդվող սպաների առկայության վերաբերյալ հարցին դրական պատասխան տված և մարտական գործողություններին մասնակցած 65 հարցվողից

- 13-ը (20%) նշել է, որ պատերազմից հետո այդ սպաները դարձել են ավելի ընկերական:
- 8-ը (12.3%) գտել է, որ դարձել են ավելի խիստ:
- 8-ը (12.3%) գտել է, որ պատերազմի ընթացքում կամ դրանից հետո այդ սպաների վարքագիծը չի փոխվել:
- 33-ը (50.8%) չի պատասխանել այս հարցին:
- 3 մարդ (4.6%) պատասխանել է, որ պատերազմի ընթացքում նման սպաների վարքը փոխվել է, սակայն հետագայում վերադարձել են կանոնադրային հարաբերություններին:

(Տես նկ.9):

Նկ. 9 Պատերազմի ընթացքում և դրանից հետո փոխվել է արդյոք «уставник» սպաների վարքը:



Հարցվողները պատասխանել են նաև «**հր սպայի տեսակն է ըստ իրենց ավելի գերադասելի**» հարցին: Պատասխաններից հետևում է, որ 112 հարցվողների մեծամասնությունը (63 հոգի, 56%) գերադասում է կանոնադրային հարաբերություններին հետևող սպաներին, 21-ը (19%)՝ կանոնադրային հարաբերություններին մասամբ հետևող, իսկ 4-ը (4%)՝ կանոնադրային հարաբերություններին չհետևող սպաներին: 24 հարցվող (21%) չի պատասխանել այդ հարցին:

Ի դեպ, մարտական գործողություններին մասնակցած հարցվողների մոտ կանոնադրային հարաբերություններով առաջնորդվող սպաների նկատմամբ վերաբերմունքը ավելի դրական է, ինչի մասին են վկայում հետևյալ մեջբերումները.



«Ճիշտը «ուսուրափն» ա: Պատրաստում է դժվարություններին: Պատերազմի ժամանակ դա ավելի լավ երևաց, որ ուսուրավը ճիշտ էր»:

(20 տ., 2020-2022թթ. զորակոչ)



««Ուսարաֆնիկ» սպաները ինձ համար ավելի գերադասելի են, քանի որ իրենց հետք գիտելիք ես ձեռք բերում: Պատերազմը ցուց տվեց, որ գիտելիքը կարա փրկի»:

(20 տ., 2020-2022թթ. զորակոչ)



«Չնայած էդ պահին հաճելի չէ, սակայն պատերազմին հասկացանք, որ «ուսարաֆնիկ» ավելի լավ ա»:

(21 տ., 2019-2021թթ. զորակոչ)

Հարցումները ցույց տվեցին, որ զինվորները հրամանատարների մեջ առավելագույնս գնահատում են հետևյալ հատկանիշները.

- մարդկային դրական հատկանիշներով օժտված լինելը (47 հոգի, 42%),
- կանոնադրային հարաբերություններին հետևելը (40 հոգի, 36%),
- ընկերական լինելը (33 հոգի, 29%),
- զինվորին գնահատելու կարողությունը (20 հոգի, 18%),
- պատրաստվածությունը (բանիմաց լինելը) (18, 16%):

112 հարցվողներից 36-ի (32.1%) հավաստմամբ՝ ծառայության ընթացքում իրենց նկատմամբ ոչ տեղին կոպտություն է դրսևորվել սպաների կողմից: Ըստ 48-ի (42.9%)՝ իրենց նկատմամբ նման վերաբերմունք չի դրսևորվել, իսկ 28-ը (25%) դրա մասին ոչինչ չեն ասել: **(Տես նկ.10):**

Հարցվածներից 63-ը (56.3%) նշել են, որ նման կոպիտ վերաբերմունք դրսևորվել է իրենց ծառայակիցների նկատմամբ: 33 հարցվող (29.5%) պատասխանել է, որ ծառայակիցները նման վերաբերմունքի չեն արժանացել, երկու հոգի (1.8%) նշել է, որ տեղեկություններ չունի նման դեպքերի մասին: 14 հարցվող (12.5%) չի պատասխանել այս հարցին: **(Տես նկ.11):**


«**Ինչպե՞ս է այն դրսևորվել**» (կոպիտ վերաբերմունքը) հարցին ամենատարածված պատասխանները եղել են.

- «հարվածել են» (44 հոգի, 59.5%),
- «ծեծել են» (38 հոգի, 51.4%),
- «վիրավորել են» (35 հոգի, 47.3%),
- «հայհոյել են» (34 հոգի, 45.9%),
- «ծաղրել են» (25 հոգի, 33.8%):


(Տես նկ.12):

Հարցվողների գերակշռող մեծամասնությունը նախընտրել է չպատասխանել «**Ո՞րն է եղել նման վերաբերմունքի պատճառը**» հարցին:


Նկ. 10 Երբևէ սպաների կողմից Ձեր նկատմամբ կոպտություն դրսևորվել է



Նկ. 11 Երբևէ սպաների կողմից Ձեր ծառայակիցների նկատմամբ կոպտություն դրսևորվել է



Նկ. 12 Ինչպե՞ս է դրսևորվել կոպտությունը



Այն եզակի հարցվողների պատասխանները, որոնք համաձայնել են խոսել են պատճառների մասին, արտահայտված են հետևյալ մեջբերումներում.



«Բոլորի հանդեպ էլ տենց բան եղել ա:
Ոչ մի պատճառ պետք չէր, տրամադրությունը կարող
ա վատ լիներ ու զինվորը դրա պատճառով տուժեր:
Սովորաբար անցնում գնում էր, նայած ինչ սպա էր:
Վաշտի հրամանատարի հետ չես գնալու հարց լուծես,
խոսաս հետը, որ իրար հասկանաք:
Ռազմական ուսրիկանություն տենց դեպքերի համար
չի եկել:
Սովորական բան ա, դրա համար ՌՌ չի գա, եթե մարդ
չեն սպանել»:

(23 տ., 2020-2022թթ. զորակոչ)




«Բոլոր դեպքերը չեն կարա նկարագրել, չեն էլ ուզի նորից հիշեմ ամեն ինչ: «Ծեծել»-ը փոքր բառ ա..., ...Օրինակ վաշտի հրամանատարը՝ իրա մոտ վիրավորելը անվերջ էր, ամեն բառը քֆուր էր: Կարար ինքը ծեծեր, կարար ասեր, որ ուրիշները ծեծեին: Դե ժամանակի հետ սովորում ես ու դիմանում»:

(23 տ. 2019-2021թթ. զորակոչ)

Ընկալումները կանոնադրային և ոչ կանոնադրային հարաբերությունների և զինծառայողների փոխհարաբերությունների վերաբերյալ

Հարցերի մեկ այլ խումբ մշակված էր ծառայության ընթացքում զինծառայողների փոխհարաբերություններին առնչվող խնդիրների վերհանման համար: Հարցմանը մասնակցած 112 քաղաքացիներից 75-ը (67%) հայտնել է, որ ծառայության ընթացքում իրենց զորամասում եղել է **«բոլորի կողմից չսիրված զինծառայող»**: 34 հարցվող (30%) նշել է, որ նման **«չսիրված»** համաձայնակից չեն ունեցել: Երեքը (3%) **«չսիրված»** համաձայնակցի վերաբերյալ հարցին գերադասել է չպատասխանել: (Տես նկ.13):

Նկ. 13 Ձեր զորամասում կամ բոլորի կողմից չսիրված զինծառայող



Ըստ հարցվողների՝ համաժառայակիցների չսիրված լինելու ամենատարածված պատճառները հետևյալն էին.

- ՌՌ-ին և սպաներին **«գործ տալը»** (18 հոգի, 24%),
- անպատասխանատու լինելը կամ հրամանատարությանը չենթարկվելը (12 հոգի, 16%),
- մեծամտությունը (12 հոգի, 16%):

Ծառայության ընթացքում **«չսիրված»** ծառայակից ունեցած 75 հոգուց 35-ը (46.7%) նշել է նաև, որ չէր շփվում նման զինծառայողների հետ:


Վերոնշյալ 75-ից 48-ը մասնակցել է մարտական գործողությունների:

Նրանցից

- 23-ը (48%) գտել է, որ պատերազմական գործողություններից հետո այդ **«չսիրված»** զինծառայողների նկատմամբ վերաբերմունքը չի փոխվել,
- 9-ը (19%)՝ որ նրանց նկատմամբ վերաբերմունքը փոխվել է դեպի լավը,
- մեկը (2%) գտել է, որ պատերազմի ընթացքում վերաբերմունքը փոխվել է դեպի լավը, հետո՝ ոչ,
- մեկը (2%) պատասխանել է, որ պատերազմական գործողությունների ընթացքում նման զինծառայողը զոհվել է,
- ևս մեկը (2%) պատասխանել է՝ «չգիտեմ»,
- 13 հարցված (27%) չի պատասխանել հարցին:


(Տես նկ.14):

Նկ. 14 Պատերազմի ընթացքում և դրանից հետո փոխվել է արդյոք նրանց նկատմամբ վերաբերմունքը



Բացի այդ, 112 հարցվողներից 77-ը (69%) նշել էին, որ **«իրենց զորամասում եղել են նաև այնպիսի զինվորներ, որոնց անընդհատ ճնշել են, նեղացրել կամ աշխատեցրել»**: 33-ի (29%) զորամասերում նման զինծառայողներ չեն եղել: Մեկ մարդ (1%) նշել է, որ չի հիշում նման զինծառայող եղել է, թե ոչ: Եւս մեկը (1%) չի պատասխանել հարցին: **(Տես նկ.15)**:

Նկ. 15 Ձեր զորամասում կային զինծառայողներ, որոնց բոլորը ճնշում էին, աշխատեցնում



«Ովքեր էին այդ զինծառայողները» հարցին հարցվողների մեծամասնությունը նախընտրել է չպատասխանել (60 հոգի, 77.9%):

Հիշատակվող տարբերակներից են եղել հետևյալները.

- զինծառայողները, որոնք չեն կարողացել իրենց պաշտպանել (10 հոգի, 13%),
- սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները (6 հոգի, 7.8%),
- նորակոչիկները (2 հոգի, 2.6%),
- ոչ ադեկվատ* զինծառայողները (2 հոգի, 2.6%):

*«Ոչ ադեկվատ» ձևակերպումը հարցվողները չեն պարզաբանել:


Իրենց ծառայության վայրում **«Իսեղճ»** զինծառայողների առկայությունը հաստատող 77 հարցվողից 34-ը (44.2%) նշել է, որ նման զինծառայողներին հաճախ են նեղացրել: 21-ը (27.3%) հայտարարել է, որ նրանց հազվադեպ էին նեղացնում, իսկ 22-ը (28.6%) չի նշել, թե որքան հաճախ էին նեղացնում **«Իսեղճ»** զինծառայողներին:

Վերոնշյալ 77 հոգուց

- 28-ը (36%) նշել է, որ այսպես կոչված «խեղճ»-երին նեղացնում էին հիմնականում զինծառայողները,
- երկուսը (3%), որ սպաները,
- 10-ը (13%), որ թե՛ սպաները, թե՛ զինծառայողները,
- իսկ 37-ը (48%) նախընտրել է չպատասխանել հարցին:

(Տես նկ.16):

Նկ. 16 Ովքեր էին նեղացնում «խեղճ» զինծառայողներին




Թե ինչով էր արտահայտվում «խեղճ» զինծառայողներին նեղացնելը հարցին վերոնշյալ 77 հոգուց (հարցվողները նշել են մեկից ավելի տարբերակ)։

- 42-ը (54.5%) նշել է, որ նրանց շահագործում էին,
- 18-ը (23.4%), որ ծաղրում էին,
- 6-ը (7.8%), որ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշումների էին ենթարկում,
- 6-ը (5.2%) հայտարարել է, որ նման մարդկանց արհամարում էին, «մարդու տեղ չէին դնում»,
- երեք մարդ (3.9%) նշել է, որ խլում էին նրանց պատկանող ունեցվածքը,

- մեկ հոգի (1.3%) հայտարարել է, որ նրանց սպառնացել են:
 - Այս հարցին չի պատասխանել 27 հոգի (35.1%):
- (Տես նկ.17):

Նկ. 17 Ինչո՞վ էր արտահայտվում «խեղճ» զինծառայողներին նեղացնելը



Ներքևում ներկայացված են մեջբերումներ՝ «Ինչպե՞ս էին նրանց նեղացնում» հարցին պատասխաններից:



«Դե կային մի քանի ծառայող, որ ամեն գործ անում էին, մեր հետ սեղան չէին նստում, մաքրելու գործերով էին զբաղվում: Հրամանատարը ասում էր, որ իրանց հետ կապ չունենանք, որ իրանք տղա չեն: Դե չգիտեմ, ոնց ասեմ, որ նորմալ հնչի: «Գումրկ» էին ու ասենք տենց քան որ իմանաս, որ մի տղեն իրանց հետ հաց կուրի կամ ձեռք կրա ու կբարևի: Մի քանի անգամ եղել ա, մյուս զինվորները խփել են, ես էլ եմ արել, բայց մեծ մասամբ իրանք առանձին էին: Երբ պետք էր

գործ անել, շինարարություն էր կամ մաքրություն էր, իրանք անում էին առանց ասելու»:

(23 տ., 2019-2021 թթ. զորակոչ)



«Բացի ինձնից մի տղա էլ կար, բայց համեմատած՝ ինձ ավելի շատ էին նեղում: Պատճառները չգիտեմ: Երևի իրանց նման չեմ, իրանց մրաժեշակերպի մարդ չեմ: Հրամանատարներից սկսվեց, հետո մյուս ծառայողները նոր սկսեցին վար վերաբերվել: Կարելի ա ասել, իրանց սրիպեցին հրամանատարները: Ծեծելուց, խիելուց բացի նաև շատ էին սպորացնում, սրիպում էին զուգարան մաքրել, առանձին նսրել հաց ուրել, նկուղում քնել... Չեմ ուզում հիշեմ ամեն ինչ»:

(21 տ., 2020-2022թթ. զորակոչ)



«Օրինակի համար, կային 2 ծառայողներ: Իրենց չենք ճնշել կամ նեղացրել: Երբ սպա էր գալիս ու ասում էր ինչ որ գործ ա պետք անել, իրանք առանց հարցնելու վազում էին: Դե ինչի էր տենց, դժվար է ասել, իրանք փակ, մեզնից հեռու իրանց համար ծառայում էին, բայց միաժամանակ, եթե պետք էր գործ անել, հասկանում էին, որ իրանք պիտի անեն: Բայց իրանց չենք ծեծել»:

(21 տ., 2019-2021թթ. զորակոչ)



«Այո կային խեղճ զինծառայողներ, որոնց փորձում էին նեղացնել, սակայն մյուս զինվորները և սպաները չէին թողնում, որ նեղացնեն, պատժում էին այդ զինվորներին, որ հասկացվի որ բոլորը հավասար են»:

(21 տ., 2017- 2019թթ. զորակոչ)

Հարցվողներից 11-ն (14.3%) է նշել, որ «**խեղճ**» զինծառայողներին նեղացնելու փաստով եղել է սպայական անձնակազմի կողմից միջամտություն:

16-ը (20.8%) հայտարարել է, որ նման դեպքերում միջամտել են համաժառայակիցները:

Մնացած դեպքերում հարցվողները նշել են, որ թե՛ սպաները, թե՛ ծառայակիցները չեն միջամտել կամ հազվադեպ են միջամտել:




«... Հիմնականում աշխատում ես բանակում ուրիշի պատճառով խնդիրների մեջ չընկնես, հեռու մնաս: Կախված իրավիճակից՝ կարող էր նաև լինել, որ օգնեիր: ... Շատ ժամանակ չէին իմանում (սպանելը), իմանալու դեպքում էլ՝ նայած ով է...»:

(20 տ., 2020-2022թթ. զորակոչ)

Զափազանց կարևոր է նշել, որ հարցվողների գերակշիռ մեծամասնությունը՝ 112-ից 96-ը (85.7%), նշել է, որ զինվորական ծառայության ընթացքում վիճել կամ կովել է ծառայակիցների հետ: Հարցվողներից ընդամենը 16-ն (14.3%) է նշել, որ նման վեճերի չի մասնակցել: **(Տես նկ.18):**

Նկ. 18 Երբևէ վիճել կամ կովել եք ծառայակիցների հետ



Համաժառայակիցների հետ վիճաբանության կամ կովի մասնակցած 96 զինծառայողի կարծիքով նման վեճերի հիմնական պատճառները եղել են.

- «իրար չեն հասկացել» (23 հոգի, 24%),
- կանոնադրության պահանջներին չենթարկվելը (13 հոգի, 13.5%),
- կենցաղային վեճեր (10 հոգի, 10.4%),
- «սխալ կամ անհիմն արտահայտություն» անելը (9 հոգի, 9.4%),
- 8 հոգի (8.3%) չի հիշել կովի պատճառը:

Այլ պատասխաններ ընդգրկում էին նաև հիգիենայի կանոններին չհետևելու, ստելու, ինքնահաստատման խնդիրներ ունենալու, գողության հետ կապված խնդիրներ:

Վերոնշյալ 96-ի ընկալմամբ՝ վեճերը հարթվում էին հետևյալ կերպ (հարցվողները նշել են մեկից ավելի տարբերակ).

- իրար հետ կարգավորելով (76 հոգի, 79.2%),
 - սպաների միջամտությամբ (15 հոգի, 15.6%),
 - դրսից ընկերներ կանչելու միջոցով (14 հոգի, 14.6%),
 - այլ ծառայակիցների միջատության շնորհիվ (13 հոգի, 13.5%),
- Հարցին չի պատասխանել 7 հարցված (7.3%):

Վերոնշյալ 96 հարցվողներից 54-ի (56%) համաձայն՝ վիճաբանությունից հետո հարաբերությունները լավացել են, 16 հոգու կարծիքով էլ հարաբերությունները խզվել կամ ավելի են վատացել (17%): 26 մարդ (27%) չի պատասխանել այս հարցին:

Հարցվողները նաև նշել են, որ զորամասում նման վիճաբանության մասին իմացել են (հարցվողները նշել են մեկից ավելի տարբերակ).

- ծառայակիցները (31 հոգի, 32.3%),
- սպաները (28 հոգի, 29.2%),
- ընկերները դրսից (16 հոգի, 16.7%),
- ոչ ոք (28 հոգի, 29.2%),
- 18-ը (18.8%) չեն պատասխանել հարցին:

«**Զորամասում ծագած վեճերի պարագայում ովքեր են միջամտել**» հարցին հարցվողները նշել են հետևյալ տարբերակները,

- սպաները (20 հոգի, 40%),
- ծառայակիցները (18 հոգի, 36%),
- ընկերները դրսից (14 հոգի, 28%),
- պատասխան չկա (8 հոգի, 16%):

Հարցումների շրջանակներում փորձ է կատարվել պարզել նաև, թե նշված 3 խմբերից յուրաքանչյուրը (**դրսի ընկերներ, սպաներ և ծառայակիցներ**) ինչպիսի միջամտություն են ունեցել վիճաբանության ընթացքում:

Այսպիսով՝ հարցվողների կարծիքով **դրսի ընկերները** փորձել են միջամտել.

- խոսելով, զրուցելով (11 հոգի, 78.6%),
- կռիվ անելով (մեկ հոգի, 7.1%),
- հարցին չի պատասխանել 2 հարցված (14.3%):

Սպաները՝

- նկատողություն տվել կամ կարգապահական տույժի են ենթարկել (12 հոգի, 60%),
- խոսել կամ զրուցել են (6 հոգի, 30%),


- ուղարկել են ՌՌ (3 հոգի, 15%),
- պատժել են ֆիզիկական վարժությունների միջոցով (2 հոգի, 10%):

Համաձայակիցները՝

- խոսել, զրուցել են (14 հոգի, 77.8%),
- կռիվ են արել (2 հոգի, 11.1%),
- հարցին չի պատասխանել 3 հարցվող (16.7%):

112-ից 52-ի (46) հավաստմամբ՝ զինվորական ծառայության ընթացքում իրենց զորմասում արձանագրվել են 1 կամ ավելի ոչ մարտական մահվան դեպքեր: 58-ը (52) նշել են, որ իրենց զորմասում նման դեպքեր տեղի չեն ունեցել, մեկը (1%) նշել է, որ տեղյակ չէ, և ևս մեկը (1%) չի պատասխանել այս հարցին: **(Տես նկ.19):**

Նկ. 19 Ձեր զորմասում արձանագրվել են ոչ մարտական մահվան դեպքեր



Ի դեպ, ծառայության ընթացքում իրենց զորմասում ոչ մարտական մահվան դեպքերի առկայությունը հաստատող 52 հարցվողներից (մեկից ավելի տարբերակ ընտրելու հնարավորությամբ).


- 43 հոգի (82.7%) նշել է, որ դեպքը տեղի է ունեցել ինքնասպանության,

- 16-ը (30.7%)՝ սպանության, ծառայակցի կամ սպայի կողմից,
- երեքը (5.8%)՝ զենքի հետ անզգույշ վարվելու հետևանքով,
- մեկը (1.9%)՝ չգիտեր պատճառը,
- երկու մարդ (3.8%) չի պատասխանել:

Պարզելու համար 2013 թվականից ՀՀ ՋՈՒ-ում ներդրված սպա-հոգեբանի ինստիտուտի գործունեության արդյունավետությունը՝ հարցման շրջանակներում փորձ է արվել պարզելու, թե զինվորական ծառայության ընթացքում հարցվողների զորամասում եղել է, արդյոք, հոգեբան սպա:

Հարցվողներից 94-ի (84%) պատասխանն այս հարցին դրական, իսկ 13-ինը (12%)՝ բացասական է: Հինգ հարցված (4%) տեղեկություն չի ունեցել զորամասում նման մասնագետ առկայության վերաբերյալ: **(Տես նկ.20):**

Նկ. 20 Ձեր զորամասում սպա հոգեբան եղել է




Բացի այդ՝

- 75 հոգի (79.8%) նշել է, որ անձամբ չեն դիմել սպա-հոգեբանին,
- 14-ը (14.9%), թեև, անձամբ չեն դիմել, սակայն ծառայության ընթացքում հոգեբանի հետ խմբային հանդիպումներ ունեցել են,
- 5 հոգի (5.3%) հայտնել է, որ սպա-հոգեբանին դիմել են: **(Տես նկ.21):**


Միևնույն ժամանակ, հարցվող քաղաքացիներից

- 36-ը (38.3%) հայտնել է, որ ծառայակիցները չեն դիմել սպա-հոգեբանին,
- 13 հոգի (13.8%) նշել է, որ ծառայակիցները դիմում էին,
- 5 հոգի (5.3%) նշել է, որ տեղյակ չեն,
- իսկ 40 հոգի (42.6%) չի պատասխանել այս հարցին: **(Տես նկ.22):**

Նկ. 21 Ծառայության ընթացքում սպա-հոգեբանին անձամբ դիմել էք




Նկ. 22 Ձեր ծառայակիցները սպա-հոգեբանին դիմում էին




Ծառայության ընթացքում սպա-հոգեբանին անձամբ դիմած 5 քաղաքացուց

- երեքը (60%) նշել է, որ մասնագետի հետ շփումը օգտակար է եղել,
- մեկը (20%) նշել է, որ սպա-հոգեբանի հետ աշխատանքն անարդյունավետ էր,
- մեկը (20%)՝ որ դիմում էր ծառայությունից խուսափելու համար: (Տես նկ.23):

Նկ. 23 Սպա-հոգեբանի հետ շփումը օգտակար է եղել է Ձեզ համար



Նկ. 24 Սպա-հոգեբանի հետ շփումը օգտակար է եղել է ծառայակիցների համար



Այն 13 հարցվողները, որոնք նշել են, որ իրենց ծառայակիցներն են դիմել սպա-հոգեբանին, ասել են նաև հետևյալը.


- «այո, օգնել է» (3 հոգի, 23.1%),
- «չգիտեմ» (3 հոգի, 23.1%),
- «ավելի շատ ընկերական էին շփվում» (1 հոգի, 7.7%),
- «դիմում էին ծառայությունից խուսափելու համար» (1 հոգի, 7.7%),
- «ոչ, չի օգնել» (1 հոգի, 7.7%),
- 4 հոգի (30.7%) չի պատասխանել այդ հարցին: **(Տես նկ.24):**

Իրենց կամ իրենց ծառայակիցների կողմից սպա-հոգեբանին դիմելու հարցին բացասական պատասխանող 89 հարցվողներից

- 50-ը (56.2%) հայտարարել է, որ չի դիմել մասնագետին կարիքի բացակայության պատճառով,
- 21-ը (23.6%) չի պատասխանել, թե ինչու չի դիմել:
- 5 հոգի (5.6%) նշել է, որ չի դիմել հոգեբանին, քանի որ դա տղամարդուն վայել չէ,
- 5 հոգի (5.6%) կասկածել է հոգեբանի մասնագիտական կարողությունների վրա,
- 5 հոգի (5.6%) վստահ չի եղել, որ հոգեբանի հետ զրույցները չեն հասնի հրամանատարությանը կամ ռազմական ոստիկանությանը,
- 3-ը (3.4%) նշել է, որ սպա-հոգեբանին չէին դիմում ծառայակիցների կողմից քննադատության չարժանանալու նպատակով:

Հարցմանը մասնակցած 112 քաղաքացուց 100-ը (89%) նշել է նաև, որ իրենց զորամասում ծառայել կամ ժամանակ առ ժամանակ այցելել է հոգևորական: 11-ը (10%) նշել է, որ իրենց ծառայության ընթացքում զորամասում հոգևորական չի եղել, իսկ մեկ հարցվող (1%) չգիտի հոգևորական եղել է, թե ոչ: **(Տես նկ.25):**


Նկ. 25 Ձեր զորամասում հոգևորական ծառայել է




Հարցվողներից փորձ է կատարվել տեղեկանալ, թե արդյոք իրենք կամ իրենց ծառայակիցները դիմել են հոգևորականին, որին ի պատասխան ստացվել են հետևյալ տվյալները.

- 87-ը (87%) անձամբ չի դիմել,
- 3-ը (3%) անձամբ դիմել են,
- 10-ը (10%) չի պատասխանել հարցին: **(Տես նկ.26):**

Նկ. 26 Ծառայության ընթացքում հոգևորականին անձամբ դիմել էք




Նկ. 27 Ձեր ծառայակիցները հոգևորականին դիմում էին




Միևնույն ժամանակ, հարցվողների հավաստմամբ,

- իրենց ծառայակիցները դիմել են հոգևորականին (21 հոգի, 21%),
- իրենց ծառայակիցները չեն դիմել հոգևորականին (29 հոգի, 29%),
- չգիտեն, թե արդյոք իրենց ծառայակիցները դիմել են հոգևորականին (4 հոգի, 4%),
- չեն պատասխանել հարցին (46 հոգի, 46%): **(Տես նկ.27):**

Նկ. 28 Հոգևորականի հետ շփումը օգտակար է եղել է Ձեզ համար



Նկ. 29 Հոգևորականի հետ շփումը օգտակար է եղել է ծառայակիցների համար



Ծառայության ընթացքում հոգևորականին անձամբ դիմած 3 քաղաքացուց 2-ը (66.6%) գտել են, որ հոգևորականի հետ շփումը արդյունավետ է եղել, իսկ մեկը (33.3%)՝ որ այն օգուտ չի տվել: **(Տես նկ.28):**


Թվով 21 քաղաքացուց, ովքեր հայտնել էին, որ իրենց ծառայակիցներն են դիմել հոգևորականին,

- 6-ը (29%) նշել է, որ հանդիպումներն օգտակար են եղել,
- 3-ը (14%)՝ որ տեղեկություն չունեն հանդիպումների օգտակարության մասին,
- 1-ը (5%)՝ որ ծառայակիցները դիմել են միայն մկրտվելու համար,
- իսկ 11-ը (52%) չի պատասխանել այդ հարցին: **(Տես նկ.29):**

Չինծառայողների ընկալումները բժշկական սպասարկման որակի վերաբերյալ

Հարցերի մեկ այլ խումբ մշակված էր ծառայության ընթացքում բժշկական սպասարկման որակի վերաբերյալ չինծառայողների ընկալումները պարզելու համար: Այս նպատակով հարցվողներին տրվող առաջին հարցը եղել է հետևյալը. «**Երբևէ դիմե՞լ եք բուժկետ**»: Հարցմանը մասնակցած 112 քաղաքացուց 83-ը (74.1%) ծառայության ընթացքում դիմել է բուժկետ այս կամ այն խնդրով: 15-ը (13.4%) հայտարարել է, որ երբևիցե չի դիմել բուժկետ, իսկ 14-ը (12.5%) չի պատասխանել այս հարցին: **(Տես նկ.30):**

Նկ. 30 Երբևէ դիմե՞լ եք բուժկետ




Հարցվողներից

- 21-ը (19%) գտնում է, որ ծառայության վայրերում բուժկետը համալրված է եղել անհրաժեշտ միջոցներով,
- 39 հոգի (35%) բուժկետի համալրվածությունը գնահատել է «նորմալ»,
- 27-ը (24%) գոհացված չէ համապատասխան միջոցներով բուժկետի համալրվածությամբ,
- հինգը (4%) որևէ տեղեկություն չի ունեցել ծառայության վայրի բուժկետի համալրվածության վերաբերյալ:
- 20 մարդ (18%) չի պատասխանել այս հարցին:

(Տես նկ.31):

Նկ. 31 Բուժկետը անհրաժեշտ միջոցներով համալրված եղել է



Բուժկետի ապահովվածության անպատշաճ մակարդակի վերաբերյալ հնչեցված ամենասուր քննադատությունները կարելի է ներկայացնել հետևյալ մեջբերումով.



«Վար, ոչ մի բան չկար, աղաջուր էր ու ցավագրկող»:

(22 տ., 2017-2019 զորակոչ):

Հնչեցված այլ կարծիքներից կարելի էր եզրակացնել, որ գինձառայողները մեծամասամբ բավարար են գնահատել իրենց զորամասերի բուժկետների ապահովվածության մակարդակը:

Ուշագրավ է, որ 23 հարցվող (20.5%) հայտարարել է, որ ծառայության ընթացքում ականատես է եղել դեպքերի, երբ առողջական լուրջ խնդիրներով գինձառայողին բուժօգնություն չի ցուցաբերվել: 32 հոգի (28.6%) հայտարարել է, որ նման դեպքեր ծառայության ընթացքում տեղի չեն ունեցել: Վեց հարցված (5.4%) նման դեպքերի չի հանդիպել, իսկ 51-ը (45.5%) այս հարցին չի պատասխանել:

Հարցազրույցի ընթացքում քաղաքացիները հնչեցրել են նմանատիպ կարծիքներ.



«Չէին կարողանում բուժել... , ... ջրծաղիկով մարդկանց ծանոթով էին ուղարկում հոսպիտալ..., ... սրամոքսի խոցով մարդուն էնքան տանջեցին՝ մինչև տեսան իրոք վատ ա՝ ուղարկեցին տուն»:

(23 տ., 2017-2019թթ. զորակոչ)



«Մարդ կա՝ փոքր բանի համար հոսպիտալացվում է, բանի որ ծանոթ ունի, բայց մյուսը, որ կարիք ունի, մնում է հերթի մեջ, սպասում է երկար»:

(20 տ., 2020-2022թթ. զորակոչ)



«Մի ամիս տանել-բերելուց հետո չէին հասկանում՝ ինչ խնդիր ա, մեղադրում էին ծառայությունից խուսափելու մեջ: Հետո շատ պնդելուց հետո նոր տարել են Երևանի հոսպիտալ, բուժվել են»:

(23 տ., 2018-2020թթ. զորակոչ)

Հարցին, թե ինչ էր լինում այն գինձառայողների հետ, որոնք առողջական խնդրով դիմում էին բուժկետ, և նրանց չէր ցուցաբերվում անհրաժեշտ օգնություն, այն 23 հարցվողները, որոնց հավաստմամբ նման դեպքեր իրենց ծառայության ընթացքում եղել են, պատասխանել են հետևյալ կերպ.


- մնացել են ծառայության վայրում և շարունակել են ծառայությունը՝ 8 հոգի (34.8%),
- խնդիրը բարդանալու հետևանքով զորացրվել են՝ 5 հոգի (21.7%),
- ի վերջո տեղափոխվել են հոսպիտալ՝ 8 հոգի (34.8%):
- Հարցին չի պատասխանել 2 հոգի (8.7%):

Հարցմանը մասնակցած 112 քաղաքացուց

- 97-ի (86.6%) հավաստմամբ, ծառայության ընթացքում իրենց զորամասում եղել են սահմանափակումներով պիտանի ճանաչված զինծառայողներ:
- 11 հոգի (9.8%) հայտարարել է, որ նման սահմանափակումներով զինծառայողներ իրենց զորամասում չեն եղել:
- երեք հոգի (2.7%) նման զինծառայողների առկայության մասին տեղյակ չի եղել,
- մեկ հոգի (0.9%) այդ հարցին չի պատասխանել:

(Տես նկ.32):

Նկ. 32 Զորամասում սահմանափակումներով պիտանի ճանաչված զինծառայողներ եղել են




Զորամասում սահմանափակումներով պիտանի ճանաչված զինծառայողներ ունեցող 97 հարցվողներից.

- 38-ը (39%) գտել է, որ ծառայության ընթացքում նմանատիպ զինծառայողների սահմանափակումները լիովին պահպանվել են,
- 10 հոգի (10%)՝ որ սահմանափակումները հիմնականում պահպանվել են,
- 11-ը (11%) գտնում է, որ մասամբ են պահպանվել,
- 11-ը (11%)՝ որ սահմանափակումները հիմնականում չեն պահպանվել,
- 18-ը (19%)՝ նկատել է, որ սահմանափակումները բացարձակ չէին պահպանվում,
- 4-ը (4%)՝ ասել է, որ պահպանվում էին ծանոթի միջնորդությամբ,
- 5-ը (5%) չի պատասխանել այս հարցին:

(Տես նկ.33):

Նկ. 33 Սահմանափակումներով պիտանի ճանաչված զինծառայողների սահմանափակումները լիովին պահպանվել են




Այն քաղաքացիներից, որոնք հայտարարել են, որ սահմանափակումները լիովին չէին պահպանվում կամ ընդհանրապես չէին պահպանվում (59 հոգի, 60.8%), փորձ է արվել տեղեկանալու, արդյոք սահմանափակումներով պիտանի ճանաչված զինծառայողները պահանջել են, որպեսզի այդ սահմանափակումները պահպանվեն, թե ոչ: 24 հարցվողի ծառայության ընթացքում նման դեպքեր եղել են:

Մասնավորապես.

- ըստ 12 (50%) հարցվողի՝ այդ պահանջները բավարարվել են,
- 4 հոգու (17%) հավաստմամբ՝ պահանջները մասամբ են բավարարվել,
- 2 հոգի (8%) ասել է, որ պահանջը չի բավարարվել,
- 5 հոգի (21%) պնդում է, որ զինծառայողն արժանացել է ծաղրանքի կամ քննադատության,
- մեկ հարցվող (4%) չի պատասխանել այս հարցին:

(Տես նկ.34):

Նկ. 34 Արդյո՞ք սահմանափակումներով պիտանի ճանաչված զինծառայողները պահանջել են, որպեսզի այդ սահմանափակումները պահպանվեն



Զինվորական ծառայության ընթացքում որակյալ սննդի ապահովում

Զինվորական ծառայության ընթացքում մատակարարվող սննդի որակի վերաբերյալ զինծառայողների ընկալումները պարզելու նպատակով մասնակիցներին տրվել է հետևյալ հարցը. **«Ինչպիսին էր սնունդը զորամասում»:**

Հարցին ի պատասխան՝ 112 քաղաքացուց 75-ը (67%) հայտնել է, որ սննդի որակը եղել է լավ կամ բավարար, 24-ը (21.4%) նշել է, որ դժգոհ են եղել սննդի որակից, 9-ը (8%)՝ որ սննդի որակը եղել է վատ մինչև քաղաքացիական մատակարարի անցնելը: 4 հարցվող (3.6%) հարցին չի պատասխանել: **(Տես նկ.35):**

“

«Վար էր, հաճախակի էինք առնում (սնունդ), եթե չառնեինք՝ սոված կմնայինք: Եղել է, որ չեմ կերել ու սոված սպասել եմ, մինչև կարողանամ դուրսից բան առնել: Մսնդի որակը վար էր, միսը ընդհանրապես ուրելու բան չէր:

Մենակ պոստերում էինք կարում նորմալ բան ուրել՝ մեր առածը»:


(22 տ., 2018-2020թթ. զորակոչ)

“

«Մսնդը զորամասում իդեալական էր, այդ ախորժակով ուրում էինք, բոլորին հավասար և ժամանակին բաժանում էին: Սոված կամ ծարավ մնում էինք զորավարժությունների ժամանակ՝ մեքենայի ուղևորները պարզապես»:

(25 տ., 2015-2017թթ. զորակոչ)

Նկ. 35 Ինչպիսին էր սնունդը զորամասում



“

«ՊԵ էր սկզբից, վատ էր, ստիպված ուրում էիք, որ սոված չմնանք: Հարկապես՝ ով հնարավորություն չունեի առնի դրսից կամ «չայնիից»: Մնացածը առնում էին: Հետո քաղաքացիական դարձավ, մի քանի օր լավ էր, հետո շատ քիչ էին տալիս, մենակ ստուգման օրերին էր նորմալ»:

(23 տ., 2017-2019 թթ. զորակոչ)

“

«Մսունդը զորամասում շատ լավ էր, շատերի տներում էրպես չի հասարար: Օգտվում էի, հավասար բաժանում էին: Պոստերում վատ էր: Կովի ժամանակ եղել է՝ սոված-ծարավ ենք մնացել 3 օր: Կարող է սնունդը մոտիկ լինել, բայց կրակոցի տակ հնարավոր չէր վերցնել»:


(21 տ., 2019-2021թթ. զորակոչ)

«Եղել են դեպքեր, երբ Դուք կամ Ձեր ծառայակիցը երկար ժամանակ սոված կամ ծարավ եք մնացել» հարցին հարցման մասնակից 112 քաղաքացուց

- 47-ը (42%) հայտարարել է, որ ոչ,
- 34-ը (30.4%) ասել է այո,
- 18-ը (16%) հայտնել է, որ ոչ, քանի որ այլ հասանելի տեղերից էին սնունդ ձեռք բերում:
- 13-ը (11.6%) չի պատասխանել այս հարցին:

(Տես նկ.36):

Նկ. 36 Եղել են դեպքեր, երբ Դուք կամ Ձեր ծառայակիցը երկար ժամանակ սոված կամ ծարավ եք մնացել




Զինծառայողների ընկալումները զինվորական ծառայության ընթացքում տույժի և պատժի մեխանիզմների վերաբերյալ և հարաբերությունները ՌՌ-ի և վարույթ իրականացնող այլ մարմինների հետ

Հարցման մասնակիցների կեսից ավելին (62 հոգի, 55.4%) հարցումների ընթացքում նշել է, որ ծառայության ընթացքում ունեցել են բացասական վերաբերմունք ՌՌ-ի, քննչական կոմիտեի և դատախազության նկատմամբ: Հարցվողներից միայն 23-ն է (20.5%) նշել, որ նորմալ էին վերաբերվում վարույթ իրականացնող վերոնշյալ մարմիններին, և մեկն (0.9%) ունեցել է դրական վերաբերմունք: 26 հոգի (23.2%) չի պատասխանել այս հարցին: (Տես նկ.37):

*Հարցվողն այժմ աշխատում է Ռազմական ոստիկանությունում:

Նկ. 37 Ծառայության ընթացքում ինչպիսի վերաբերմունք էք ունեցել ՌՌ-ի, քննչական կոմիտեի և դատախազության նկատմամբ



Հաջորդ հարցը ձևակերպված է եղել հետևյալ կերպ. «**Դուք կամ Ձեր ծառայակիցները երբևէ եղել եք դրանցից որևէ մեկում**»:

Պատասխանները դասավորվել են հետևյալ կերպ.

Անձամբ հարցվողները.


- «այո, եղել եմ»՝ 36 հոգի (32.1%),
 - «ոչ, չեմ եղել»՝ 63 հոգի (56.3%),
 - «չեմ եղել, բայց ՌՌ աշխատակիցներն այցելել են զորամաս»՝ 9 հոգի (8%):
- Հարցին չի պատասխանել 4 հարցված (3.6%):

Ծառայակիցները.

- «այո, համաժառանգակիցներս եղել են»՝ 44 հոգի (39.3%),
- «ոչ, համաժառանգակիցներս չեն եղել»՝ 10 հոգի (8.9%),
- «համաժառանգակիցներս չեն եղել, բայց ՌՌ աշխատակիցներն այցելել են զորամաս»՝ 6 հոգի (5.4%),
- «չգիտեմ»՝ 5 հոգի (4.5%),

Հարցին չի պատասխանել 47 մարդ (42%): (**Տես նկ.38**):

Նկ. 38 Դուք կամ Ձեր ծառայակիցները երբևէ եղել եք դրանցից որևէ մեկում



Հետևյալ մեջբերումներում ներկայացվում են հարցվողների մոտեցումներն այս կառույցների վերաբերյալ.



«Ռազմական ուսրիկանությանը լավ վերաբերվող մարդ չկա: Ինձ չեն տարել, բայց ընկերներիցս մի քանի հոգի գնացել են: Կոիվ էր եղել մի քանի ջոկի մեջ: Տենց մի քանի հոգի տարել էին: Վախեցնել, գոռալ, հայհոյել պարզ ա՝ եղել ա: Նույնը ինչ սովորական ուսրիկաներն են անում: Դե մերոնք քան չեն ասել, մի օր հեղոք բաց են թողել»:

(21 տ., 2019-2021թթ. զորակոչ)



«Ռազմականին ոչ մի զինվոր կամ սպա լավ չի վերաբերվում: Դրանց սիրող չկա, երևի իրենց հարազատները չեն սիրում անգամ: Նույնն էլ քննչականը կամ դատախազությունը: Իրենց մոտ չենք գնացել, մենակ իրանք էին գալիս: ՌՌ-ն ժամանակ առ ժամանակ գալիս էր ստուգումներ անցկացնելու: Հարցեր էին տալիս, առանձին մեր հետք խոսում էին: Բայց դե ասելու բան չկար: Ինչ ուզում ա լինի, բան չես ասելու: Ավելի լավ ա քեզ գլխից խփես քան ՌՌ բան պարմես ու գործ տվող դառնաս»:

(23 տ., 2019-2021թթ. զորակոչ)



«Նորմալ: Ես՝ այո, մեկ անգամ եղել եմ: Կոիվ էր եղել՝ որպես վկա տարել էին: Հարգալից են եղել: Հարցաքննել են և բաց թողել»:

(23 տ., 2017-2019թթ. զորակոչ)



«Նորմալ: Այո, մի ընկերը քսած տեղը խփել էր՝ ծառայակից ընկերոջ աչքի տակը կապտացրել, ուղղակիանը տարել էր, ոչ մի բռնություն չի եղել, ամեն ինչ ըստ օրենքի»:

(25 տ., 2015-2017թթ. զորակոչ)

«Ինչի համար էին տանում ՌՌ» հարցին մասնակիցների մեծամասնությունը՝ 112-ից 63-ը (56%), նախընտրել է չպատասխանել:

Առավել հաճախ հնչած տարբերաներից են եղել հետևյալները.

- կոիվ անելու համար՝ 28 հոգի (25%),
- հեռախոս պահելու համար՝ 9 հոգի (8%),
- զորամասն ինքնակամ լքելու համար՝ 8 հոգի (7%),
- ակոհոլ օգտագործելու համար՝ 4 հոգի (3%):


(Տես նկ.39):

Հաջորդ հարցով փորձ է արվել պարզել, թե ինչ վերաբերմունքի են արժանացել հարցվողներն ու նրանց ծառայակիցները ՌՌ-ում գտնվելու ժամանակ: Հարցին պատասխանել են այն քաղաքացիները, որոնք հայտարարել էին, որ եղել են ՌՌ-ում (36 հոգի), և այն հարցվողները, որոնք նշել էին, որ այնտեղ եղել են իրենց ծառայակիցները (44 հոգի): Այս հարցի պատասխանները դասավորվել են հետևյալ կերպ.

Իրենց նկատմամբ.

- «հարգալից»՝ 20 հոգի (55.6%),
- «անհարգալից» (սպառնացել են, հայհոյել, խփել, պահել խցում և այլն)՝ 12

Նկ. 39 Ինչի՞ համար էին տանում ՌՌ



հոգի (36.1%),

- «անմիջապես ծանոթ եմ գտել»՝ մեկ հոգի (2.8%):
- Հարցին չի պատասխանել 3 մասնակից (8.3%):
(Տե՛ս նկ.40):


Ծառայակցի նկատմամբ.

- «հարգալից»՝ 11 հոգի (25%),
 - «անհարգալից» (սպառնացել են, հայհոյել, խփել, պահել խցում և այլն)՝ 20 հոգի (45.5%),
 - «չգիտեմ»՝ 8 հոգի (18.2%),
- Հարցին չի պատասխանել 7 մասնակից (15.9%):
(Տե՛ս նկ.41):


Միևնույն ժամանակ, հարցվողներից 33-ը (29.5%) նշել է, որ ՌՌ-ում իրենց կամ ծառայակիցներին բացատրել են իրենց իրավունքները, 25-ը (22.3%) նշել է, որ չեն բացատրվել, 40-ը (35.7%) չգիտի, իսկ 1-ը (0.9%) չի հիշել նման բան: Այս հարցին չեն պատասխանել 13 (11.6%) հոգի:

Հարցվողների մեծամասնությունը նշել է, որ իրենց երբևէ չեն ստիպել

Նկ. 40 Ինչ վերաբերմունքի են արժանացել հարցվողները ՌՌ-ում



Նկ. 41 Ինչ վերաբերմունքի են արժանացել Ձեր ծառայակիցները ՌՌ-ում



խոստովանել ինչ-որ բան կամ ցուցմունք տալ.


- 101-ը (90.2%) նշել է, որ անձամբ նման երևույթի չի բախվել,
- 6-ը (5.3%) հայտարարել է, որ անձամբ բախվել են նման խնդրի,
- 5 մարդ (4.5%) չի պատասխանել:

Մինչդեռ ժամանակ,

- 85 (75.9%) հոգի նշել է, որ նման դեպք տեղի չի ունեցել նաև իր ծառայակիցների հետ,
- 7-ը (6.3%) պնդում է, որ ծառայակիցների հետ նման դեպք եղել է,
- 9-ը (8%) փոխանցել է, որ տեղեկություն չունեն նման դեպքերի վերաբերյալ,
- 11-ը (9.8%)՝ չի պատասխանել հարցին:

(Տես նկ.42):

Նկ. 42 Ձեզ կամ Ձեր ծառայակիցներին երբևէ ստիպել են խոստովանել ինչ-որ բան կամ ցուցմունք տալ



Հատկանշական է, որ հարցվողներից 7-ը հայտարարել են, որ ՌՌ-ում իրենց կամ իրենց ծառայակիցներին պահել են բավականին երկար ժամանակ:
 4-10 օր՝ 3 հոգի,
 11-30 օր՝ 3 հոգի,
 31 օր և ավելի՝ 1 հոգի:

Հարցվող 112 քաղաքացուց

- 47-ը (42%) ծառայության ընթացքում ենթարկվել է կարգապահական տույժի,
- 55-ը (49.1%) չի ենթարկվել,
- 10 հարցվող (8.9%) կարգապահական տույժի վերաբերյալ հարցին չի պատասխանել:

Միևնույն ժամանակ,


- 43-ը (38.4%) նշել է, որ ծառայողական տույժի են ենթարկվել իրենց ծառայակիցները,
- 37-ը (33%) նշել է, որ նման տույժի իրենց ծառայակիցները չեն ենթարկվել:
- 3 հոգի (2.7%) տեղյակ չի եղել, թե արդյոք ծառայակիցները ենթարկվել են նման տույժի, թե ոչ:
- 29 մասնակից (25.9%) չի պատասխանել այս հարցին:

(Տես նկ.43):

Ի դեպ, կարգապահական տույժի հիմնական պատճառներ են հանդիսացել.

- վիճաբանությունները/կոիվները՝ 21 (31.8%),
- ավերակ ոգտագործելը՝ 13 (19.7%),
- հրամանին չենթարկվելը՝ 11 (16.7%),
- զորամասն ինքնակամ լքելը՝ 10 (15.2%),
- բջջային հեռախոս պահելը՝ 7 (10.6%):

Նկ. 43 Ծառայության ընթացքում Դուք կամ Ձեր ծառայակիցները ենթարկվել եք կարգապահական տույժի



Հետաքրքրական է, որ այն 66 քաղաքացիներից, որոնք հայտնել են, որ իրենք կամ իրենց ծառայակիցները ենթարկվել են կարգապահական տույժի,

- 28-ը (42.4%) գտել է, որ տույժը արդար է եղել,
- 5-ը (7.6%)՝ որ տույժն արդար չի եղել
- մեկը (1.5%)՝ որ մասամբ է արդար եղել,
- 32 հարցվող (48.5%) չի պատասխանել հարցին:

(Տես նկ.44):

Ընդ որում, հարցվողներից ոչ ոք չի նշել, որ նշանակված տույժի կապակցությամբ դիմել է զորամասի իրավաբանին՝ վերջինիս չվստահելու պատճառաբանությամբ:

2 հոգի հայտնել է, որ անձամբ իրեն հրամանատարը պատժել է՝ փակելով ինչ-որ վայրում, 5 հոգի՝ որ նման դեպք եղել է իր ծառայակցի հետ:


Ի դեպ,

- հարցվողներից մեկը նշել է, որ նմանատիպ պատիժը տևել է մի քանի ժամ,
- ևս մեկը՝ 1 օր,
- երկուսը՝ 2 օր և ավելին:

«Գիտե՞իք, թե ում կարող էիք դիմել Ձեր կամ Ձեր ծառայակիցների իրավունքների ոտնահարման դեպքում» հարցին հարցվողներից

- 38-ը նշել է, որ տեղյակ էր, որ կարող էր դիմել պաշտպանության նախարարության թեժ գծին (33.9%),
- 24-ը (21.4%) նշել է, որ կարող էր դիմել զորամասի սպաներին,
- 22-ը (19.6%) ոչ ոքի էլ չէր դիմի,

Նկ. 44 Ձեր կարծիքով տույժը արդար է եղել



- 21-ը (18.8)՝ կնախընտրեցին դիմել զորամասում կամ դրսում իրենց ընկերներին:

Հաջորդ հարցը նպատակ է ունեցել պարզելու, թե **խախտվել են, արդյոք, մարտական գործողություններին մասնակցած զինծառայողների իրավունքները մարտական գործողությունների ընթացքում և դրանց ավարտից հետո:**

Մարտական գործողություններին մասնակցած 69 զինծառայողներից 14-ը հայտնել է, որ այո, և որպես ամենատարածված խախտումներ՝ նշել հետևյալները.

- զինվորական գրքույկում չի գրանցվել մարտական գործողություններին մասնակցելու փաստը,
- ունեցել են պետպատվերով բուժում ստանալու կամ թոշակավորման համար

անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման խնդիրներ:

Ուսումնասիրության ամենավերջին հարցն ուղղված է եղել պարզելու, թե **«Ինչ է անհրաժեշտ փոխել հայկական բանակում»:** Այդ հարցի վերաբերյալ հարցվողներից

- 38-ը (33.9%) գտել է, որ անհրաժեշտ է թարմացնել տեխնիկան և սարքավորումները,
- 24-ը (21.4%) նշել է, որ զինվորներին պետք է ապահովել բոլոր անհրաժեշտ պարագաներով, որ դրսից երեւէ բանի կարիք չլինի,
- ևս 24-ը (21.4%) նշել է, որ ցանկալի է, որ կանոնադրության համաձայն ծառայելը պարտադիր լինի բոլորի համար,
- 19-ն (17%) էլ նշել է, որ կցանկանար տեսնել ավելի բանիմաց սպայական կազմ:

Եզրակացություններ

Հարցազրույցների արդյունքները հիմք են հետևյալ հիմնական եզրակացությունների.

1. Զինվորական ծառայության նկատմամբ նույնիսկ մարտական գործողությունների միջոց անցած զինծառայողների մեծամասնության վերաբերմունքը հիմնականում անձնակենտրոն է, այսինքն՝ զինծառայությունը դիտվում է որպես անձապես կայանալու, կատարելագործվելու միջոց:
2. Կանոնադրային հարաբերություններ ասելով՝ զինծառայողները հասկանում են առավելապես զինվորական պատրաստականությունը (ֆիզիկական, մարտական և մտավոր պարապմունքներ), իսկ միջանձնային հարաբերությունները, այդ թվում՝ դրանց կարգավորումը, դուրս են դրանց շրջանակից:
3. Զինծառայողների միջև միջանձնային հարաբերությունները, ներառյալ՝ բախումներն ու անհամաձայնությունները, հաճախ կարգավորվում են կանոնադրային հարաբերություններին հակառակ՝ բռնության, բռնության սպառնալիքի միջոցով, այդ թվում՝ քաղաքացիական անձանց միջամտությամբ:
4. Զինծառայողներն առավելապես գերադասությունը տալիս են զինվորական կանոնադրություններին հետևող (հատկապես՝ բարձր ինտելեկտուալ, ռազմական պատրաստականություն ունեցող) սպաներին, քան՝ զինվորական կանոնադրություններով չառաջնորդվողներին:
5. Զորամասերի մեծամասնությունում կան հրամանատարներ (սպաներ), որոնք, որպես սովորական ու պարբերական վարվելակերպ, վատ վերաբերմունք (խոշտանգում, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ) են դրսևորում զինծառայողների (ստորադասների) նկատմամբ:
6. Զինծառայողների մեծամասնությունը ենթարկվել կամ ականատես է եղել վատ վերաբերմունքի (խոշտանգում, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ), ներառյալ՝ ծեծ, վիրավորանք, ծաղրածանակ:
7. Միջանձնային հարաբերություններում գերակշռող կարգավորիչ գործիք են քրեական ենթամշակույթի վարքականոնները, որոնց մի շարք դեպքերում հետևում են նույնիսկ հրամանատարական կազմի ներկայացուցիչները:

8. Զինճառայության շրջանակներում ամենապարսավելի ու ամենաանընդունելի վարքը համագործակցությունն է (կատարված հանցանքի մասին այս կամ այն կերպ հայտնելը) իրավապահ մարմինների հետ, ինչը հատկանշական է քրեական ենթամշակույթի վարքականոններին:
9. Մի շարք զորամասերում զինճառայողների որոշ խմբեր կատարում են հարկադիր աշխատանք, այսինքն՝ ստիպողաբար կատարում են հանձնարարություններ, որոնք չեն մտնում իրենց ճառայողական պարտականությունների մեջ:
10. Թե՛ հրամանատարական կազմի, թե՛ հավասարակից զինճառայողների կողմից կոպտորեն խախտվում են որոշ զինճառայողների վատ վերաբերմունքից (հատկապես՝ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքից) և շահագործումից (հարկադիր աշխատանքից) զերծ լինելու իրավունքները՝ որպես սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դրսևորում:
11. Տարբեր պատճառներով խոցելի ու թույլ զինճառայողները քիչ դեպքերում են ստանում հրամանատարական կազմի պաշտպանությունն ու աջակցությունը:
12. Միջանձնային բախումների, անհամաձայնությունների դեպքերի միայն փոքր մասն է կարգավորվում հրամանատարական կազմի միջամտության միջոցով, նույնիսկ, եթե վերջիններս տեղեկացված են լինում դեպքի մասին:
13. Զինճառայողների ճնշող մեծամասնությունը ոչ միայն չի գիտակցում հոգեբանական աջակցություն ստանալու անհրաժեշտությունը, այլ անգամ գիտակցելու դեպքում չի դիմում զորամասի սպա-հոգեբանին կամ հոգևորականին:
14. Թե՛ սպա-հոգեբանին, թե՛ հոգևորականին ինչ-որ անձնային խնդրի պատճառով դիմելը հիմնականում տվել է դրական արդյունք:
15. Սպա-հոգեբաններին չդիմելու երկու հիմնական պատճառները նրանց նկատմամբ անվստահությունը (մասնագիտական գիտելիքների ու կարողությունների ենթադրյալ պակաս, գաղտնիության խախտման մտավախություն) և հոգեբանական աջակցության վերաբերյալ սխալ պատկերացումներ (ամոթալի կամ պարսավելի արարք համարելը) ունենալն է:
16. Զորամասերի մի մասում (մոտ 1/4) բուժկետները որակյալ բժշկական օգնություն ցուցաբերելու հնարավորությունից զրկված են:

17. Մի շարք զորամասերում զինծառայողներին (այդ թվում՝ լուրջ առողջական խնդիրներ ունեցող) չի ցուցաբերվում պատշաճ բժշկական օգնություն:
18. Զինծառայողների առողջական վիճակի հետ կապված հարցերում (որակյալ բժշկական օգնության ցուցաբերում, սահմանափակումների պահպանում) բարձր են կոռուպցիոն ռիսկերը, այսինքն՝ այդ հարցերը մի շարք դեպքերում լուծվում են կոռուպցիոն ճանապարհով:
19. Զորամասերի սնունդը, հատկապես՝ քաղաքացիական մատակարարի կողմից տրամադրվող, առավելապես որակյալ է, սակայն երբեմն (հատկապես՝ մարտական հերթապահության ժամանակ) զինծառայողները սեփական միջոցներով են սնունդ գնում և պատրաստում այն:
20. Զինվորական իրավապահ մարմինների (ռազմական ոստիկանություն, քննչական մարմին և դատախազություն) նկատմամբ զինծառայողների վերաբերմունքը խիստ բացասական է՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:
21. Ռազմական ոստիկանությունում որոշ դեպքերում զինծառայողների նկատմամբ դրսևորվում է վատ վերաբերմունք (խոշտանգում, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք), ի թիվս այլնի՝ ցուցմունք տալուն հարկադրելու համար:
22. Մի քանի դեպքում ռազմական ոստիկանության կամ հրամանատարության կողմից կոպտորեն խախտվել է զինծառայողի անձնական ազատության իրավունքը, այն է՝ զինծառայողը, չլինելով ձերբակալված կամ կալանավորված, ռազմական ոստիկանության կողմից տևական ժամանակ պահվել է ռազմական ոստիկանության բաժնում, կամ հրամանատարի կողմից՝ ինչ-որ փակ տարածքում (շինությունում):
23. Զինծառայության ընթացքում ամենատարածված իրավախախտումներն են (քրեական կամ կարգապահական) ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունը, զորամասը լքելը, հրաման չկատարելը, ալկոհոլի օգտագործումը, բջջային հեռախոս պահելը:
24. Զորամասի իրավաբանի նկատմամբ զինծառայողների վստահության մակարդակը չափազանց ցածր է:
25. Զինծառայողների կեսից քիչ ավելին է տեղյակ իրավունքների խախտման դեպքում դրանց պաշտպանության հնարավոր իրավական եղանակներին (որպես հասցեատեր նշելով հրամանատարությունը կամ պաշտպանության նախարարությունը):
26. Զինվորական ծառայությունը բարելավելու երկու առանցքային ուղղություններն են՝ նյութատեխնիկական ապահովման

կատարելագործումը (ներառյալ՝ թե՛ ռազմական տեխնիկան, թե՛ ոչ պարենային ապրանքները) և հրամանատարական կազմի կատարելագործումը (ներառյալ՝ թե՛ անձնային-արժեհամակարգային, թե՛ ռազմական պատրաստականության բաղադրիչները):